Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

23191/1

331.11
Ш-89

1931

05 JAN 2010
331.11:69
Ա-89

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԿՆՔՎԱԾ

ՌԱԶՄԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ № 44 ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՎ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

331.11:69
Ա-89

ՅԵՐԵՎԱՆ 1931

2 5 FEB 2013

23191/1

10231-57

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՊՎԱՐ 6121 (բ)
ՊԱՏՎԵՐ № 2531
ՏԻՐԱԺ 160

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## Ընդհանուր մաս

§ 1

Սույն հավաքական պայմանագիրը կնքվում է մեկ կողմից Հայաստանի կառուցող բանվորների անունից Կառուցողների Արհմիության (Կենտրոնական վարչության) որը հետագայում կոչվելու է, «ՄԻՈՒԹՅՈՒՆ» և մյուս կողմից Թաղմաշինարարական № 44 վարչության միջև որը հետագայում կոչվելու է «ՈՒՆ»· սույն հավաքական պայմանագիրը կնքվում է ի զարգացումն գործող և նոր հրատարակվող Աշխօրենսդրությունների (ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1928 թ. 4/IV որոշումն և այլն):

§ 2

Սույն հավաքական պայմանագրի նպատակն է ապահովել բանվոր դասակարգի առաջ դրված խնդիրների ավելի քան արագ կերպով կատարումն, ժողովրդական տնտեսության վերակառուցման, յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառներում ու անշեղորեն ու արագ կերպով բարելավելու ՀՍԽՀ կառուցող բանվորների և ծառայողների նյութական, կուլտուր-կրթական և սոցկենցաղային պայմանները:

§ 3

Ըստ սույն հավաքական պայմանագրի 2-րդ կետի [illegible] աշխատանքներում գրավված վարչատն-[illegible] բոլոր ճարտարապետ-տեխնիկ աշխա-

Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

տավորները և բանվոր ծառայողները իրենց վրա պար-
տավորություն են վերցնում՝ լրիվ կերպով կատարելու
և գերակատարելու 1931 թ. արդֆինպլաններով նախա-
տեսված քանակային և վորակական ցուցանիշները,
արտադրության պրոցեսների ճիշտ կազմակերպմամբ,
հարվածային աշխատանքի մեթոդի ճիշտ կազմակերպ-
մամբ, պրոլետարական դիսցիպլինայի ամրացմամբ, և
ունենալ կոմունիստական վերաբերմունք դեպի աշխա-
տանքները. դրա հետ միասին ՈՒՆ-ը պարտավորվում է
ապահովել անհրաժեշտ արտադրական պայմանները
այդ խնդիրները ի կատար ածելու, ինչպես և պարտա-
վոր է անպայման և իր ժամանակին կատարել
սույն պայմանագրի բոլոր կետերը՝ աշխա-
տավարձի կարգավորման, աշխատանքի իրավական
պայմանների վերաբերյալ, միաժամանակ աջակցել
բարելավելու բանվորների կուլտուրական, սոցկենցա-
ղային և բնակարանային պայմանները:

§ 4

1931 թ. ՈՒՆ-ը պարտավորվում է կիրառել հե-
տեվյալ միջոցառումները՝

ա) Տնտեսական տարվա առաջին իսկ ամսից ապա-
հովել արտադրության զարգացումը, համաձայն արդ-
ֆինպլաններով նախատեսված չափի:

բ) Սույն պայմանագիրը ստորագրելուց վոչ ուշ
մինչեվ 15/III համաձայն շինարարության ընդհանուր
արդֆինպլաններ մշակել կալենդարնի պլանները բստ
առանձին տեսակի և շենքերի կառուցումների և վոչ ուշ
մեկ շաբաթվա ընթացքում նոր սկսվող կառուցումների
համար և այդպիսին հանձնել ցեխերին և խմբերին:

գ) Արդֆինպլանով նախատեսված ռացիոնալաց-
ման միջոցները կիրառելու հետ զուգընթաց, պարտա-
վոր է տնտեսական տարվա ընթացքում կիրառել նաև
այն միջոցները, վորոնք կառաջադրվեն բանվորների
ճարտ. տեխնիկների և ուրիշների կողմից, ոժանդակել
պլանի գերակատարմանը, միևնույն ժամանակ ա-



ռանց հետաձգելու կիրառել կյանքում բանվորների
գյուտարարությունները:

դ) Սույն հավաքական պայմանագիրը ստորագրելուց
. . . . . . . ավվա ընթացքում վորոշել գործա-
դրվող շինանյութերի, հումույթի, վառելիքի, և էլեկ-
տրաէներգիայի չափը, և կազմակերպել ներքին հսկո-
ղության վորոշված նորմաների կատարման և նյութե-
րի ու պատրաստված գործիքների վորակը ստուգելու
համար:

ե) Միանձնյա ղեկավարություն սահմանելու հա-
մար վերամշակել բոլոր վերատեսչական և վարչատեխ-
նիկական կազմի և մնացած աշխատակիցների իրա-
վունքների և պարտականությունների կանոնները:

զ) Կազմակերպել պլանային աշխատանք կորուստների
դեմ պայքար մղելու թե արդյունաբերության և թե շի-
նարարության մեջ:

է) Ուժեղացնել վարչական և տեխնիկական աշխա-
տավորների պատասխանատվությունը, ինչպես շինա-
րարության և գործարանում զբաղված բանվորների մեջ
իրենց հանձնարարված աշխատանքները կատարելու
հանդեպ:

ը) Արդֆինպլանով նախատեսված ռացիոնալաց-
ման միջոցների գործադրման հետ զուգընթաց անպայ-
ման գործադրել նաև այն միջոցները, վորոնք սույն
պայմանագրի գործելու ընթացքում կառաջադրվեն բան-
վորների և ճարտարապետ-տեխնիկ աշխատակիցների
կողմից և վորոնց առաջարկները հավանության ար-
ժած կլինեն Վարչության կողմից:

թ) Կազմակերպչական և տեխնիկական ոժանդա-
կություն ցույց տալ հետագայում ավելի ևս ծավա-
լելու և ամրացնելու սոցմրցումն ու հարվածայնությու-
նը, տալով հարվածայիններին առաջին հերթին լավ
պայմաններ արտադրության մեջ:

ժ) Ապահովել պլանային հետախուզական աշխա-
տանքները տեխ. նորմիրովկայի բյուրոյի համար ար-
տադրության ռացիոնալացման արտադրողականության

բարձրացման և աշխատանքները նորմիրովկայի յենթարկելու նպատակով:

ժա) Կառավարության նշած ժամանակամիջոցում նշանակել ստուգիչ թվեր և հայտարարել տեղերին վոչ ուշ . . . . . . . . . ից:

ժբ) Ապահովել շինարարական աշխատանքները ամբողջ տարվա ընթացքում և ստեղծել մշտական բանվորական կադր և ուժեղացնել աշխատանքների մեքենայացումը և ստանդարտիզացիա մտցնել շինարարության մեջ. շինարարական ժամանակի ամբողջ ընթացքում ապահովել շինանյութերի անընդհատ մատակարարումը, բանուժի ռացիոնալ ոգտագործումը, ինչպես և ներքին միջոցների ոգտագործումը:

ժգ) Կատարել ճիշտ և կանոնավոր հաշվառում, սոցմրցման, արտադրողականության բարձրացման, ցուցադրելով ստացված էֆֆեկտները:

Ծանոթություն.— Շինարարական հետ ընկած կարեվոր միավորներին ոժանդակելու համար Վարչությունը և տեղկոմը պարտավոր են կազմակերպել հարվածային բրիգադներ ավյալ շինարարության լավագույն հարվածայիններից շինարարության և պլանային ճեղքվածքները վերացնելու համար:

ժդ) Վոչ ուշ յուրաքանչյուր ամսի 10-ից ներկայացնել բանվ. կոմիտեյին ավյալներ կառուցումների, արդֆինպլանների կատարման, վորակական և քանակական ցուցանիշները:

ժե) Յուրաքանչյուր ամսում տեղյակ պահել բոլոր բանվորներին կառուցումների, յուրաքանչյուր շենքի արդֆինպլանների հիմնական ցուցանիշների կատարման մասին:

ժզ) Ստեղծել բանվորների համար անհրաժեշտ կենցաղային և կուլտուրական պայմաններ, յուր ժամանակին վճարել աշխատավարձը, աջակցել համապատասխան կոոպերատիվ մարմիններին սննդի խնդիրները (ճաշարաններ, բուֆետներ) կարգավորելու համար փոխադարձ համաձայնագրեր կնքելու միջոցով: Հատկացնել միանգամայն հարմար բնակելի շենքեր բանվորներին և յուր ժամանակին մատակարարել արտհագուստը բնականով:



## § 5

Բանվորները և ծառայողները իրենց հերթին պարտավորվում են՝

ա) Միանգամայն վերացնել առանց հարգելի պատճառների կրկնվող պրոգուլները, լրիվ ոգտագործել բանվորական որը, ձգտել գերակատարելու տրված արտադրական պլանը, միաժամանակ լավացնելով գործի վորակը:

բ) Կահավորությունը և գործիքները լավ պահպանել, տնտեսաբար գործադրել հումույթը և նյութերը, թույլ չտալ սահմանված չափից ավելի ծախսել բանուժը, նյութերը, հումույթը և այլն:

գ) Ամեն կերպ բարձրացնել արտադրության վորակը, բարեխիղճ վերաբերմունքի շնորհիվ վերացնել բրակը և փոխադարձ հսկողություն ունենալ միմյանց վրա:

դ) Վարչության կարգադրությունը ժամանակին կատարելով աջակցել միանձնյա ղեկավարության սկզբունքի կիրառմանը:

ե) Պարբերաբար բարձրացնել իր վորակը հաճախելով պոլիտեխնիկական դասընթացներ, դպրոցներ, խմբակներ և այլն:

զ) Անպայման կատարել ներքին կարգապահության կանոնները:

## § 6

Բանկոմը պարտավորվում է՝

ա) Վճռական կերպով ամրացնել աշխատանքի դիսցիպլինան, ակտիվորեն պայքարել պրոգուլների, դըրվոցների և աշխատանքի դիսցիպլինան բոլոր տեսակի խախտողների և միաժամանակ բանվորական ուժի հոսունության դեմ:

բ) Պարբերական հսկողություն սահմանել արդ—

ֆինպլանների քանակական և վորակական կատարումը ապահովելու համար, մոբիլիզացիայի յենթարկել շինարարության վրա դրացված բանվորներին-ծառայողներին և ԾՏՍ աշխատավորներին արդֆինպլաններով նախատեսված բոլոր ցուցանիշները կատարելու, ռացմրցումը և հարվածայնությունը ծավալելու և ամրացնելու, գյուտարարության յեվ արդխորհրդակցության աշխատանքները ծավալելու միջոցով:

գ) Կազմակերպել ադմինիստրացիայի հետ միասին արտադրական խնդիրների ու ռացմրցման և հարվածայնության արդյունքների մասին բանվորներին պարբերաբար տալ ինֆորմացիա, ցույց տալ ադմինիստրացիային պրակտիկ աջակցություն շինարարության հետամնաց մասերի աշխատանքները աշխուժացնելու և դժվարությունները վերացնելու գործում, վորոնք կապված են արդֆինպլանների կատարման հետ:

դ) Իրականացնել ամենօրյա հսկողություն և կազմակերպել մասսայական ստուգումներ, հավաքական պայմանագրով փոխադարձ պարտավորությունների կիրառման համար:

§ 7

Կողմերը պարտավորվում են բոլոր այն դեպքերում, յերբ շինարարության պլանների կատարումը վտանգ է սպառնում՝ միասին մշակել կոնկրետ միջոցառումներ, արդֆինպլանների կատարման ընթացքում առաջացած դժվարությունները վերացնելու և նրանց կատարումը ապահովելու համար:

Բանվորները և ծառայողները պարտավորվում են՝

ա) Մինչև տարվա վերջը իր ցանկությամբ չթողնել աշխատանքը. պայքար տանել շատ-շատ տեղից տեղ փոխադրվողների դեմ: Բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը 33 տոկոսով. ինքնարժեքը իջեցնել 11 տոկոսով՝ աշխատավարձը 4 տոկոսով բարձրացնելու համար:

բ) Վերացնել բանվորների մեղքով առաջացած բրակ աշխատանքները կամ նրանց վերաշինելու յերևույթը:



## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

§ 8

Սույն հավաքական պայմանագիրը տարածվում է ՀՍԽՀ սահմաններում աշխատող բոլոր բանվոր-ծառայողների և ԾՏ աշխատավորների վրա և թե պայմանագրի գործելու ընթացքում նոր ընդունվողների վրա, ինչպես և նույն ժամանակամիջոցում նոր սկսվելիք ձեռնարկությունների վրա, անկախ վարձելու ժամանակամիջոցից:

§ 9

Հավաքական պայմանագիրը կնքվում է մեկ տարի ժամանակով սկսած 1931 թ. հունվարի 1-ից մինչև 1931 թ. դեկտեմբերի 31-ը:

§ 10

Պայմանագրի գործելու ժամանակամիջոցում նրա առանձին կետերը կամ մասերը կարող են փոփոխության յենթարկվել միմիայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հետին թվով չի թույլատրվում փոփոխություն մտցնել սույն պայմանագրի մեջ, վորը վատացնում է աշխատանքի պայմանները:

Յեթե մինչև սույն պայմանագրի ժամանակամիջոցը լրանալը նոր հավաքական պայմանագիր չի կնքվում, բանվոր-ծառայողների աշխատանքի պայմանները կարգավորվելու յեն սույն պայմանագրով:

Աշխատանքի պայմանների բարելավումը, վոր նախատեսվելու յե նոր պայմանագրի մեջ, ուժի մեջ է մանելու նոր պայմանգրի գործելու որից:

## ԿԱԴՐԵՐ

§ 11

Ազատ պաշտոնների կամ աշխատանքի տեղերի, ինչպես և նոր ընդունելությունները կատարելու դեպքում,

վարչությունը պարտավոր է առաջին հերթին առաջ քաշել ավելի վորակյալ հարվածայիններին թե բանվորներից և թե ծառայողներից, վորոնք պատրաստվել են տվյալ աշխատանքի համար, առաջնությունը տալով վորակյալներին և տվյալ ձեռնարկությունում ավելի յերկար ժամանակ աշխատողին:

§ 12

Այնտեղ, ուր կան Աշխժողկոմատի կադրերի բաժին կամ նրանց փոխարինող մարմիններ, բանվորների և ծառայողների ընդունելությունները կատարվելու յեն միմիայն Աշխժողկոմատի Կադրերի Վարչության կամ տեղական մարմինների միջոցով, վերջինս յերկու որվա ընթացքում չուղարկելու դեպքում, վարչությունը կարող է կողմնակի մարդկանց ընդունել և այդպիսի ամեն մի ընդունելը նախորոք պետի համաձայնեցնել բանկոմի հետ:

§ 13

Առաջին հերթին ընդունվում են աշխատանքի՝

ա) Արհմիության անդամները և նրանց հավասարեցվածները.

բ) Հարվածայինների վորդիները, անչափահասները, կանայք, քույրերը և յեղբայրները, իսկ վոչ հարվածայիններից նրանք, վորոնք վոչ պակաս 3 տարուց աշխատել են տվյալ ձեռնարկություններում. բացի այդ վարչությունը պարտավոր է առաջին հերթին ընդունել չին. աշխատանքի այն բանվորներին, վորոնք ավարտել են Կենտ. ինստիտուտ (ՑԻՏ) և ուղարկված են աշխատանքի Աշխժողկոմատի օրգանների կողմից, համաձայն վարչության պահանջի:

Անկախ Աշխժողկոմատի կադրերի վարչությունից, բանկոմի համաձայնությամբ կարելի յե ընդունել հետևյալ պաշտոնյաներին՝ դիվանապետ, հաշվապահներ պահեստապետներ, հանձնակատարներ, գանձապահ-արտելշչիկներ, միության կողմից առաջ քաշվածներ ... աշխատանքների համար և հետևյալ կարգի տաս-



նապետները՝ ա) Վարչությունում անցյալ տարվանից աշխատողները. բ) Տասնապետական կուրսեր ավարտողները և անընդհատ 3-ից և ավել տարի անընդհատ արտադրական ստաժ ունեցողներից:

Ուրիշ վայրերից աշխատավորներ վարձելու դեպքում, յերբ այդ կապված է բնակավայրի փոփոխության հետ, Վարչությունը պարտավորվում է ճանապարհին յեղած ժամանակամիջոցի աշխատավարձը վճարելու աշխատավորներին, նրանց տարիֆային դրույքների հաշվով, վճարելով նաև փոխադրման հետ կապված ծախսերը (փոխադրման արժեքը, յերկաթգծով, շոգենավով և այլն և 33 կգ. ծանրոցի փոխադրման արժեքը): Բանվորներից անկախ պատճառներով նրանց աշխատանքից ազատելու դեպքում վճարվում է նաև վերադարձի փոխադրման ծախսը և 33 կգ. ծանրոցի փոխադրման արժեքը:

Աշխատավորի աշխատավարձը վճարվում է աշխատավայրը հասնելու որվանից:

§ 14

Ամեն մի նոր ընդունվող բանվոր-ծառայողի վերաբերյալ բանկոմը կարող է բողոքել այդ մասին վարչությունից հայտարարություն ստանալուց 5 որվա ընթացքում:

Յեթե վարչությունը չի հարգում բանկոմի բողոքը, գործը հանձնվում է ԳԿՀ-ին քննության և վերջինի վորոշումը պարտադիր է կողմերի համար:

§ 15

Ճարտ.-տեխ. այն աշխատավորների ընդունելությունները, վորոնք իրենց ցանկությամբ փոխադրվում են ուրիշ ձեռնարկություններից թույլ է տրվում միայն բանկոմ-խմբկոմի համաձայնությամբ և նախկին աշխատանքի վայրից գրավոր համաձայնություն և թույլտվություն ներկայացնելուց հետո:

§ 16

Աշխժողկոմատի կադրերի Վարչության պահանջված աշխատավորին պետք է ընդունել կամ փորձնական աշ-

խատանք տալ, յեթե աշխատավորին չի թույլատրվի գործի վայրը հասնելու ժամենից անցնելու աշխատանքի կամ փորձնական աշխատանքի մինչև աշխատանքի անցնելը աշխատավորը պետք է վարձատրվի տարիֆային դրույքով աշխատանքի վայրը ներկայանալու ժամենից, մինչև աշխատանքի անցնելը կամ Աշխժողկոմատի Կադրերի բաժնին հետ ուղարկելու ժամանակամիջոցի համար:

§ 17

Գործի ընդունվելու համար փորձնական աշխատանքի տալու ժամկետը վորոշվում է՝

ա) Բանվորների համար 6 բանվորական որ.

բ) Գրասենեկային և հաշվային ծառայողների համար մինչև ավագ հաշվետարը ներառյալ 12 բանվորական որ ավելի բարձր, հաշվային գրասենեկային և ճարտատեխնիկ աշխատավորների նկատմամբ 24 բանվորական որ:

Այն բանվոր-ծառայողները, վորոնք մնում են աշխատանքում փորձնական աշխատանքի համար սահմանված որերից ավելի, մեխանիկորեն համարվում են աշխատանքի ընդունված:

§ 18

Վորակավորման դասընթացներ ավարտած ճարտատեխնիկ աշխատավորները, ինչպես և այն աշակերտները, վորոնք սովորել են շինուսներում, պարտավոր են աշխատել տվյալ ձեռնարկությունում մինչև հնգամյակի վերջը:

§ 19

Վարչությունը պարտավորվում է արտելների փոխարեն կազմակերպել ցեխային բրիգադներ և նշանակել բրիգադիրներ. բրիգադիրներ նշանակել առաջին հերթին հարվածայիններին, լավագույն արտադրական բանվորներին, արժեքավոր արդ. առաջարկներ անողներին և գյուտարարներին:



Բրիգադիրը պարտավոր է իր բրիգադայի հետ համատեղ աշխատել և ստանալ աշխատավարձ իր բրիգադային հասանելիք կարգով: 49 հոգուց ավելի կազմով բրիգադայի համար, թույլ է տրվում ունենալ ազատ բրիգադիր վարչության հաշվով, վորը ստանալու յե կրտսեր տասնապետի դրույքով, սակայն վոչ պակաս իր բրիգադայում ստացած միջին աշխատավարձից:

§ 20

Համաձայն Համամիութենական Աշխժողկոմատի 1930 թ. հոկտմբերի 29-ի № 340 շրջաբերականի վարչությունը պարտավորվում է ամրացնել շինարարության վրա աշխատող բանվորներին:

§ 21

Բանվոր-ծառայողների կրճատումը կատարվում է վարչության և բանկոմի նախորոք կայացրած համաձայնությամբ: Աշակերտները կրճատման յենթակա չեն, այլ փոխադրվում են ուրիշ հիմնարկություններ աշխատելու:

Հաստիքի (շտատի) կրճատման դեպքում աշխատանքներում թողնվելու նախապատվությունը տրվում է՝

1)՝ Արհմիության անդամներին.

2) 1931 թ. զինակոչի յենթականերին.

3) Հարվածային բանվ.-ծառայողներին, ինչպես և յերկար ժամանակ տվյալ ձեռնարկությունում աշխատողներին, վորոնք նկատողության կամ տուգանքի տակ ընկած չեն աշխդիսցիպլինան խախտելու համար:

4) Արտադրական կոմունաների անդամներին:

5) Քաղաքի բանվորներին, վորոնք գյուղական յեկամուտներով չեն ոգտվում:

6) Կենտրոնական ինստիտուտ (ՑԻՏ), շինուս և յերիտբանվորության դպրոցներ ավարտողներին:

7) Ինքնամրցման պայման կնքողներին:

§ 22

Ժամանակավորապես աշխատունակությունը կորցրած աշխատավորին արձակելը թույլատրվում է,

յեթե այդպիսին 4 ամսից ավել գործի չի հաճախում (չհաշված հղիությունը և արձակուրդը). աշխատանքի ընթացքում պատահած դժբախտ պատահարների հետևանքով ժամանակավորապես աշխատունակությունը կորցրածին արգելվում է հեռացնել մինչև առողջանալը, կամ բժշկական հանձնաժողովի կողմից անաշխատունակության աստիճանը վորոշելը:

§ 23

Բանվոր-ծառայողները, վորոնք աշխատում են շինարարության վրա, ձեռնարկի լրիվ կամ մասնակի լուծարքի կամ աշխատանքները մեկ ամսով դադարեցնելու դեպքում աշխատանքից հեռացնելու մասին պետք է նախազգուշացնել հետևյալ կարգով՝ մեկ ամսից պակաս աշխատողին 7 օր առաջ, 6 ամիս և 6 ամսից ավել ամիս աշխատողներին 15 օր առաջ: Հեռացվողներին պետք է հայտարարել գրավոր, առնելով նրանցից այդ մասին ստորագրություն, բացի այդ պետք է նշանակել հաշվեգրքույկում հեռացման ժամկետը:

§ 24

Աշխատանքից կրճատվող, օրավարձով և գործարքով աշխատող բանվորներին վերջնական հաշիվները պետք է փակել վոչ ուշ կրճատման հետևյալ օրից, իսկ գործարքով աշխատողների վերջնական հաշիվները պետք է փակել կրճատման օրից սկսած 3 օրվա ընթացքում:

Բոլոր տեսակի աշխատավարձը և դրամական փոխհատուցումները վերոհիշյալ ժամկետներում լրիվ կամ մասնակի չափով չվճարելու դեպքում բոլոր սպասած օրերի համար բանվորները վարձատրվում են սպասած 3 օրերի համար միջին աշխատավարձի հաշվով, իսկ հետագա օրերի համար ըստ տարիֆային դրույքների: Աշխատավարձի կրճատման շուրջը կոնֆլիկտներ առաջանալու դեպքում աշխատավորը առանց սպասելու մինչև կոնֆլիկտի լուծումը կարող է ստանալ հաշիվները. Կոնֆլիկտը աշխատավորի օգտին լուծվելու դեպքում վարչությունը պարտավոր է բոլոր սպասած օրերի աշխատավարձը (մինչեվ վերջնական հաշիվները մաքրելու օրը) վճարել ըստ տարիֆային դրույքների: Այն դեպքում, յերբ աշխատավորը չի ներկայացնում հաշիվները ստանալու, այդպիսին սպասելու յե աշխատանքները փաստորեն ավարտելու օրը:

Ծանոթություն.— Կրճատման օրը համարվում է աշխատավորի հետ վերջնական հաշիվները մաքրելու օր (բոլոր տեսակի աշխատավարձի վճարման, դրամական փոխհատուցումների կատարումը, սպասման վկայականներ և հաշվեգրքույկներ տալը):

§ 25

Յեթե բրիգադայում աշխատողների 50 տոկոսը և ավելին իրենց ցանկությամբ հեռանում են գործից դեռ գործը չվերջացած, նրանց վճարվում է տարիֆային դրույքներով, իսկ վերջնական հաշիվները նրանց հետ պետք է փակել մոտիկ ապագայում ընդհանուր հաշվարքի ժամանակ: Հեռացողները, յեթե տվյալ վայրից յեվս հեռանում են, լուծարքից հետո նրանց հասանելիքը վարչությունը իր հաշվով փոխադրելու յե թողած հասցեների համաձայն:

Յեթե վարչության կարգադրությամբ բրիգադայի մի մասը հեռացվում է համաձայն Աշխօրենսգրքի 47 հոդվածի «ա» և «բ» կետերի, վարչությունը պարտավոր է չափել և հաշվել կատարած աշխատանքները և վերջնական հաշիվը փակել նրանց հետ համաձայն .... հոդվածի հաշվել միջին աշխատավարձի չափով:

Այն բանվոր-ծառայողները, վորոնք իրենց ցանկության համաձայն հեռանում են գործից, պետք է նախազգուշացնեն 15 օր առաջ. նախազգուշացումը կատարվելու յե վորոշ օրերում, վորպիսի օրերը վորոշվում են բանկոմի և վարչության փոխհամաձայնությամբ: Այն բանվորներին, վորոնք չեն նախազգուշացրել 15 օր առաջ հեռացման մասին, տրվում է վերջնական հաշիվը բանվորների աշխատավարձ ստանալու հերթական օրը:

§ 26

ա) Վարչությունը պարտավոր է բանվորներին ուղարկել տանտագետական դասընթացներ և ավարտելուց հետո տալ նրանց չենքերում արտադրական պրակտիկայի տեղեր կամ աշխատանք: Դասընթացներում սովորելու ընթացքում վարչությունը պարտավոր է ազատել նրանց աշխատանքից մինչև աշխատանքի վերջը մի ժամ առաջ:

Բացի այդ վարչությունը պարտավոր է ուղարկել տանտագետներին տեխնիկական կուրսեր և տեխնիկներին ճարտարագետական, իսկ ճարտարագետներին վերաորակավորման դասընթացներում սովորելու համար, ըստ արդֆինպլանների, ըստ միության համաձայնության վոչ ուշ 1-III 31 թ.

բ) Կատարել անգրագետների հաշվառումը:

գ) Վարչությունը պարտավորվում է կառուցումներում պահել բոնյա ամբողջ աշխատավորների 4 տոկոսի չափով, համաձայն ԽՍՀՄ-ի Աշխժողկոմատի վորոշման:

§ 27

Վարչությունը պարտավոր է ամբողջ բանվոր-ծառայողների աշխատավարձի 3 տոկոսի չափով ամեն ամիս հատկացնել Հայպետշինին և ԽՍՀՄ Աշխժողկոմին Շինուսի և ՑԻՏ-ի մեթոդով բանվորական կադրեր վորակավորելու և վերավորակավորելու համար (համաձայն Անդրկովկասյան Աշխժողկոմատի 29/IV-30 թ. №52 վորոշման):

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՅԵՎ ՆՈՐՄԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ

§ 28

Բոլոր գործերում կիրառվելու յե ուղղակի գործարքային աշխատանքի ձևը, առանց գերարտադրանքի սահմանափակման. որավարձային աշխատանքը թույլատրվում է միայն նորմիրովկայի չենթարկվող աշխատանքներում:



Ակկորդային աշխատանքներ թույլատրվում են բացառիկ դեպքում, այն էլ միության գիտությամբ և համաձայնությամբ:

§ 29

Առանձին աշխատանքների վարձատրությունը կատարվում է միության հետ համաձայնեցված, միացյալ գնացուցակների համաձայն, վորպիսի գնացուցակը պարտադիր է աշխատանքի նորմալ պայմաններում: Գնացուցակներից վոչ հարգելի պատճառներով շեղումներ կատարելը արգելվում է:

Միասնական նորմաներով նախատեսված արտադրության պայմանների բացակայության դեպքում, յերբ հնարավոր չե գնահատել աշխատանքը կամ փոխել աշխատանքի այն պայմանները, վորոնք ազդում են աշխատանքի վրա, ցածրացնելով այն, գնահատությունը կատարվելու յե ԳԿՀ-ի կողմից: ԳԿՀ-ն քննության է առնում և գնահատում նաև այն աշխատանքները, յերբ ձեռնարկության մեջ իբրև նորություն է կիրառվում և ստեղծում աշխատանքի հատուկ պայմաններ, որինակ՝ ռացիոնալացում, այս կամ այն գործի կազմակերպչական տեխնիկական բարելավում և այլն, վորոնք բանվորի աշխատավարձը բարձրացնում են:

Բոլոր նման դեպքերում վարչությունը պետք է ստուգի գնացուցակներում կատարված բոլոր փոփոխությունները, իսկ ԳԿՀ-ն իր հերթին պետք է արձանագրի այն պատճառները, վորոնց հետևանքով կատարվել է գնացուցակների իջեցում կամ ավելացում:

ԳԿՀ-ի կատարած փոփոխությունները վերաբերելու յեն միմիայն տվյալ աշխատանքին և վոչ թե ամբողջ շինարարությանը:

ԳԿՀ-ի կատարած գնացուցակների փոփոխությունները կարող են տարածվել բոլոր այն շինարարությունների վրա, յեթե ԳԿՀ-ն կազմված լինի միջգերատեսչական կարգով (ամեն մի մեծ շինարարության ներկայացուցչի մասնակցությամբ, միության ներկայացուցչի մասնակցությամբ):

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Աշխատանքներում առաջացած բոլոր անհորմալությունների մասին բանվորները պարտավոր են հայտնել վարչությանը, վերջինս այդ մասին կազմելու յե արձանագրություն:

§ 30

Վարչությունը և Միությունը հավասար չափով պատասխանատու յեն այն գնացուցակների ճիշտ կիրառման և շեղումների համար, վորոնք կազմված են շինարարության և շինանյութեր արտադրող ձեռնարկությունների համար:

Միութենական կազմակերպությունները սույն պայմանագրի համաձայն պարտավոր են իրենց վրա վերցնել պայմանագրի ճիշտ կիրառման հսկողությունը, գնացուցակների կիրառումը շինարարություններում, տանել բացատրական աշխատանքներ բանվորական մասսաների մեջ գնացուցակների նշանակության մասին և տեխնիկական նորմիրովկայի կատարած դերի ու դիսցիպլինայի մասին: Կենտրոնացնել բանվորների ուշադրությունը և օժանդակությունը տեխնիկական նորմիրովկայի գործը ավելի ուժեղացնելու. ձեռնհաս և համապատասխան բանվորների առաջ քաշումը, հատկապես հարվածայիններին, լրացնելու տեխ. նորմիրովկայի աշխատողների թիվը, իր ժամանակին տեղեկացնել վերադաս մարմիններին և Աշխժողկոմատին վարչության պատճառով տեղի ունեցած գնացուցակների խախտումների մասին և միջոցներ ձեռք առնել գնացուցակների դիսցիպլինան ամուր հիմքերի վրա դնելու:

Աշխատ. արտադրողականության լրիվ հաշվետվությունը պահանջել շին. օրգաններից, ապահովել հսկողությունը և իր օժանդակությունը այդ խնդրում: Ձեռք առնել միջոցներ անմիջապես կանխելու շինարարության մեջ առաջացած ընդմիջումները, վորոնք կասեցնում են արտադրության ընթացքը աշխատանքի բոլոր բնագավառներում: Միաժամանակ անհրաժեշտ է պարբերաբար ուսումնասիրել աշխատավարձի սահմանված նորմաները և ուսումնասիրության արդյունքները



օգտագործել հետագայում աշխատավարձի խնդիրները կարգավորելու համար:

§ 31

Աշխատանքների միացյալ գնացուցակներում չը նախատեսված աշխատանքի գները մշակվում են վարչության կողմից, յելնելով տվյալ աշխատանքների կարգի, բանվորների տարիֆային դրույքների և արտադրանքի նորմաներից:

Համամիութենական միասնական նորմաներում չը նախատեսված արտադրական նորմաները (նորմի վիրակի) և նրանց կարգը սահմանվում է ըստ աշխատանքի բնույթի և վոչ թե աշխատանք կատարող անձի կարգի, նորմաների չափը սահմանվում է լավագույն բանվորների արտադրանքի հիման վրա կատարած խրոնոմետրաժի տվյալներով:

Յեթե աշխատանքի գոյություն ունեցող պայմանները այնպես են դասավորված, վոր ամենալավ բանվորը ինտենսիվ աշխատելու դեպքում չի կարողանում արդարացնել աշխատավարձի սահմանած նորման, այդ դեպքում նորմաները չեն փոփոխվում, այլ ԳԿՀ-ի վորոշմամբ բարձրացվում են գները: Բարձրացրած գնացուցակները պահպանում են իրենց գոյությունը այնքան ժամանակ, վորքան ժամանակ շարունակվեն հիշված առանձնահատուկ պայմանները: Գնացուցակների ամեն մի բարձրացում պետք է կատարել տեղում, նախորոք հարցը քննելուց հետո: Յեթե աշխատանքի պայմանները նորմալ են և բանվորը չի կարողանում արդարացնել իր նորման, այդ դեպքում գնացուցակների բարձրացում չի կատարվում:

Յեթե աշխատանքի տեխնիկական կազմակերպչական պայմանները բարեփոխվում են և աշխատանքի արտադրողականությունը սկսում է բարձրանալ, անկախ բանվորի աշխատանքի պայմաններից, աշխատավարձի պայմանները և նորմաները վերամշակվում են ԳԿՀ-ի միջոցով 6 ամսվա ընթացքում, իսկ առանձին բարդությունների դեպքում՝ 12 ամսվա ընթացքում:

§ 32

Ցեխե բանվորի ձեռներեցությամբ վորեվե աշխատանքի մեջ բարեփոխություն ե մտնում, վորով բարձրանում ե արտադրողականությունը, գնացուցակի նորման այդ բանվորի վերաբերյալ յենթարկվում ե փոփոխության և տրվում ե բանվորին բացի փոխհատուցումից նաև վերջին յերեք ամիսների համար նոր գնացուցակի տարբերությունը, անկախ նրանից, թե տվյալ բանվորը անհատապես թե բրիգադայի մեջ ե աշխատում:

§ 33

Այն դեպքում, յեթե աշխատանքները կատարված են կոլեկտիվ կերպով (հարվածային բրիգադաները, արտադրական կոլեկտիվները և այլն), վարձատրության ընդհանուր նորմաները վորոշվելու յեն ամեն դեպքում աշխատանքի բնույթի և կատարման մասերի համաձայն, հայտարարելով այդ մասին բանվորներին:

Համաձայնություններ սահծելու, աշխատավայրը [illegible]

[illegible] հաշվառությամբ) հաշվելու յեն առանձին, անկախ գործարքից, իբրև ինքնուրույն աշխատանք, համաձայն միջին աշխատավարձի:

§ 34

ՑԻՏ-ի և չինուսի դպրոցները ավարտած այն բանվորները, վորոնք գործարքով աշխատելիս չեն արդարացնում իրենց տարիֆային դրույքները, վարչությունը մինչև յերկու ամիս ապահովում ե նրանց տարիֆ դրույքները, հետագայում չարդարացնելու դեպքում վճարումները կատարվելու յեն ըստ արտադրական աշխատանքների:

§ 35

Գործարքով աշխատանքներում դրված բանվորները վոչ իրենց մեղքով տարիֆային դրույքները չարդարացնելու դեպքում վարչությունը ապահովում ե նրանց տարիֆ դրույքները:

§ 36

Պարբերաբար տարիֆ դրույքները չարդարացնելը կարող ե առիթ դառնալ բանվորին աշխատանքից հեռացնելու, ավելի ցածր վորակի աշխատանքի փոխադրելու կամ գնացուցակները վերանայելու:

§ 37

Այն դեպքում, յերբ մինչև գործարքային աշխատանքների անցնելը առաջադրվում ե նախապատրաստական աշխատանքները գործարքի հաշվի մեջ չեն մըտնել, և գնացուցակներով չեն նախատեսված և վորպես ինքնուրույն չի կարող համարվել, նման նախապատրաստական աշխատանքների համար կորցրած ժամանակամիջոցը վարձատրվում ե միջին աշխատավարձի չափով:

§ 38

Նորմաների և գնացուցակների առթիվ վարչության և բանվորների մեջ հարուցված կոնֆլիկտները լուծվելու յեն ԳԿՀ-ի կողմից, մինչև կոնֆլիկտները լուծվելը բանվորները իրավունք չունեն հրաժարվելու աշխատանքից, յեթե նույնիսկ նրանք համաձայն ել չլինեն տվյալ ցուցակով աշխատելու:

Ծանոթություն.—Այն աշխատանքների վարձատրությունը, վորպիսին բանվորը կատարել ե վարձատրության մասին կոնֆլիկտ հարուցելու ժամանակաշրջանում ԳԿՀ-ին դիմում տալու որվանից, վճարելու յեն նրանց համաձայն ԳԿՀ-ի վորոշման, սակայն վոչ պակաս նրան գործը հանձնելու որը պայմանավորվածից: ԳԿՀ-ի վորոշումից հետո նույնպիսի աշխատանքը վարձատրվելու յե համաձայն ԳԿՀ-ի վորոշման. թեկուզ այդ վորոշմամբ ավելի ցածր վարձ հասնի բանվորներին, քան թե վարչությունն ե սահմանել աշխատանքը հանձնելիս:

§ 39

Գործարքով աշխատող այն բանվորները, վորոնք նշանակվում են նոր ստացված մեքենաները, ստանոկները, կամ նյութը փորձելու, այդ փորձի ժամանակաշրջանում ստանում են իրենց միջին աշխատավարձից վոչ պակաս:

§ 40

Գործարքով աշխատանքը բանվորներին հանձնելու դեպքում վարչությունը պարտավոր է նախորոք բացատրել գործի բնույթը, չափը, գնահատությունը և աշխատանքի ժամանակի տևողությունը, վորպիսիք պահանջում է գործը:

Յեթե տրված աշխատանքի գները գնացուցակով նախատեսված չեն յեղել, գները վորոշվելու յեն ԳԿՀ-ի կողմից:

Ծանոթություն.— Բանվորները իրավունք չունեն հրաժարվելու տրված գործից, սակայն այդ հանգամանքը չի արգելում նրանց բողոքել ԳԿՀ-ի վորոշման դեմ:

§ 41

Կառուցողների Արհմիության Կենտկոմի մշակած տարիֆային տեղեկագրի համաձայն պետք է վորոշել բանվորի կատեգորիան թե անհատապես և թե բրիգադայի մեջ աշխատելու դեպքում, վոչ ուշ քան նրա ընդունվելու 7-րդ օրը, համաձայն կատարվող աշխատանքի վորակի և վոչ թե աշխատանք կատարող անձի վորակի:

Չի թույլատրվում բանվորի կատեգորիան վորոշել բրիգադայի հայեցողությամբ: Յեթե վարչությունը 7 օրվա ընթացքում չի վորոշել նրա կատեգորիան, այդ դեպքում մինչև բանվորի կատեգորիայի վորոշումը բանվորը ստանալու յե վարձատրություն այն չափով, ինչ չափով նախկին աշխատավայրում ստացել է:



§ 42

Աշխատանքի հանձնումը և չափումը անպայմանորեն կատարվելու յե բրիգադայի ներկայացուցչի մասնակցությամբ, չափելու և հանձնելու համար գործադրվող ժամանակամիջոցի մասին պետք է հիշատակել ստացողական-հանձնողական արձանագրության մեջ և այդ ժամանակի համար վարչությունը վճարելու յե մասնակցողի միջին աշխատավարձի չափով:

Հանձնման արձանագրությունը ստորագրվում է յերկու կողմից յեվս: Կատարված աշխատանքի արձանագրված հաշվի պատճենը տրվելու յե բրիգադայի ներկայացուցչին առաջին իսկ պահանջի դեպքում:

§ 43

Աշխատանքի օրեկան տարիֆ դրույքի առաջին կարգը սահմանվում է՝ բանվորների համար՝ 1 ռուբլի 72 կոպ., իսկ առաջին կարգի աշակերտների համար մեկ ռուբլի 12 կոպ. աշխատավարձի բաշխումը կատարվում է հետևյալ տարիֆային ցանցով՝

| Բանվորների համար կարգ. | Փոխհարաբերութ. | Օրեկան տարիֆ դրույք. |
|---|---|---|
| 1 | 1.0 | 1—72 |
| 2 | 1,25 | 2—15 |
| 3 | 1,45 | 2—49 |
| 4 | 1,60 | 2—75 |
| 5 | 1,80 | 3—10 |
| 6 | 2,10 | 3—65 |
| 7 | 2,5 | 4—30 |

| Աշակերտ. համար | Փոխհարաբերութ. | Օրական տարիֆ դր. |
|---|---|---|
| 1 | 1,0 | 1—12 |
| 2 | 1,30 | 1—45 |
| 3 | 1,60 | 1—80 |
| 4 | 1,90 | 2—15 |

Ծանոթություն.—1. Անընդհատ արտադրական շաբաթի անցնելու դեպքում վարչությունը

խառը բոլոր բանվորներին վճարելու նրանց տարիֆ դրույքի 4,2-ի չափով շաբաթական հանգստի օրերի 2 ժամերի կրճատման դիմաց:

Ծանոթություն· 2· Աշակերտներն աշակերտական ցանցով տարիֆիկացիայի չեն ենթարկվում միայն 2 տարվա ուսման ընթացքում, սովորելու տևողությունը 3 տարի լինելու դեպքում վերջին տարում վճարումը կատարվելու է ընդհանուր բանվորական ցանցի համաձայն այն հաշվով, վորպեսզի վերջին կիսամյակում ստանա մի կարգով ցածր այն արհեստի կարգից, վորով նա զբաղվելու է դպրոցն ավարտելուց հետո, բայց վոչ պակաս այն աշխատավարձից, վորը ստացվել է միջինում:

§ 44

Ծառայողների և հաշվագրասենյակային ու տնտեսական պերսոնալի համար սահմանվում է պաշտոնների ամսական դրույքների ձև, ըստ սույնին կցված պաշտոնների և աշխատավարձի չափի:

Որեկան տարիֆային դրույքները ամսական աշխատավարձի դրույքը 25 որվա վրա բաժանելու միջոցով (կցում № 1):

§ 45

Աշխատավարձը վճարվելու է ամսական յերկու անգամ· առաջին կեսի համար վոչ ուշ 20-ից, իսկ յերկրորդ կեսին վոչ ուշ հաջորդ ամսի 5-ից, ըստ վորում առաջին կեսի համար տրվելու է ավանս տարիֆ դրույքի հաշվով, իսկ յերկրորդ կեսի աշխատավարձը վճարելիս փակելու է վերջնական հաշիվն ամբողջ ամսվա համար, համաձայն կատարած աշխատանքների, տվյալ ամսվա ընթացքում:

Յեթե աշխատողի հանգստի որը զուգադիպում է աշխատավարձ վճարելու որվա հետ, այդ դեպքում նը– պարտավոր է գործարքով և որավարձով աշ–



րանց աշխատավարձ պետք է տրվի հանգստյան որվա նախորյակին: Աշխատավարձը պետք է վճարել աշխատանքի ժամերին և աշխատանքի վայրում, ամեն մեկին առանձին-առանձին, անձամբ աշխատավարձի ցուցակով:

§ 46

Աշխատանքների համար անհրաժեշտ գործիքներ տրվելու են ձրի, վարչության կողմից:

Բանվորին աշխատանքի չընդունել նրա համար, վոր բանվորը սեփական գործիք չունի, չի թույլատրվում:

Բանվորների սեփական գործիքների մաշման համար դրամական փոխհատուցումը կատարվում է համաձայն սույնին կցված ցուցակի (կցում № 2):

## ԲՐԱԿՆԵՐԻ, ՊՐԱՍՏՈՅՆԵՐԻ ՅԵՎ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

§ 47

Սահմանված աշխատավարձով աշխատավորները պարտավոր են կատարել լավ վորակի աշխատանք:

Այն դեպքերում, յերբ բրակն առաջ է գալիս աշխատավորի անփույթ վերաբերմունքի, տեխնիկական կանոնների չպահպանման, ներքին կարգապահության կանոնների խախտման հետևանքով և դիտավորյալ կերպով և աշխատանքներից թեքվելու հետևանքով, կատարված աշխատանքների աշխատավարձը չի վճարվում:

Այն դեպքերում, յերբ աշխատանքները կատարվում են ցածր վորակով կատարած աշխատանքի համար, վարձատրությունը կատարվում է ցածր գներով համապատասխան աշխատանքների թերությունների ըստ տոկոսային հարաբերությամբ և ադմինիստրացիայի վորոշմամբ, տարաձայնությունների դեպքում վեճը դրվում է ԳԿՀ-ի վորոշման:

Աշխատավորի մեղքով անվորակ կատարած աշխատանքը պետք է վերաշինվի առանց լրացուցիչ վարձատրության, նույն բանվորների միջոցով կամ պետք է վարձատրվի ցածր գներով ըստ համապատասխան թերությունների։

Այն դեպքերում, յերբ աշխատավորները նկատում են, վոր անվորակ գործիքների, նյութերի, և այլնի հետեվանքով աշխատանքներում կարող է առիթ ստեղծվել բրակ աշխատանքների, աշխատավորները պարտավորվում են այդ մասին անմիջապես հայտնել ադմինիստրացիային, ադմինիստրացիան բանվորներից առաջարկությունները ստանալուց հետո, կատարված աշխատանքները վարձատրվում են լրիվ գներով, անկախ կատարված աշխատանքների վորակից։ Առանց ադմինիստրացիայի կարգադրության կատարված բրակ աշխատանքների համար վարձատրություն չի տրվելու, և աշխատավորներից պահվելու յեն փչացած նյութերի արժեքը, բացի դրանից նրանք յենթարկվելու յեն պատասխանատվության ըստ տույժերի ցուցակի։

Փչացած շինանյութերի արժեքը (բացի դիտավորյալ և վնասարարության դեպքերից) պահվում է փաստորեն հասցված վնասի չափով, սակայն այն հաշվով, վորպեսզի աշխատավորն առձեռն ստանա իր տարիֆ դրույքի յերկու յերրորդը։

Վարչատեխնիկական անձինք իրենց սխալ կարգադրությամբ՝ յերբ պատճառ են դառնում անվորակ և վատ աշխատանք առաջացնելուն, անձնապես նյութական պատասխանատվության են յենթարկվում պատճառած վնասի համար, բացառությամբ այն դեպքերի, յերբ տեխնիկական անվտանգության պահպանման, արտադրական փորձնական աշխատանքների և ռացիոնալիզատորական միջոցների կիրառման համար են արված կարգադրությունները, վորոնցով պահանջվել է արտադրական անհրաժեշտ համարձակություն (ռիսկ)։

§ 48

Աշխատավորի կամ աշխատավոր խմբերի անփույթ վերաբերմունքի, նրանց կողմից ներքին կարգա-



պահության կանոնների խախտման, դիտավորյալ կերպով աշխատանքներից հրաժարվելու և վարչատեխնիկական կազմի կարգադրությունները չկատարելու հետեվանքով առաջացած պրաստոյների համար աշխատավորները չեն վարձատրվելու, և մեղավորները կարող են աշխատանքից ազատվել առանց լուծարքային նպաստի։

§ 49

Աշխատավորը պարտավոր է անմիջապես հայտնել վարչության և բանկոմին պրաստոյի դեպքում, բացի այդ իրենցից կախված բոլոր հնարավոր միջոցները պետք է գործ դնի և նախազգուշացնի վարչության, առաջ գալիք պրաստոյը կանխելու։ Հակառակ դեպքում պրաստոյի համար չի վճարվում և բանվորը պետք է յենթարկվի պատասխանատվության համաձայն տույժերի ցուցակի։

§ 50

Շենքերի ադմինիստրացիան պարտավոր է միջոցներ ձեռք առնել պրաստոյները կանխելու, հակառակ դեպքում, յերբ անխուսափելի յե, պարտավոր է բանվորներին փոխադրել ուրիշ աշխատանքի։

Վարչության պատճառով առաջացած պրաստոյների (յերբ անխուսափելի յե կամ ժամանակին կարգադրություն չի արված) համար հանցավորները յենթարկվում են պատասխանատվության, բացի այդ վճարում են նրանց անփութությունից առաջացած բոլոր վնասները։

§ 51

Աշխատավորներին մի աշխատանքից մի այլ աշխատանքի, մի շենքից մի այլ մոտավոր շենք փոխադրելու դեպքում, վորը գտնվում է միևնույն աշխղեկավարի հսկողության տակ, կարող է կատարվել հետեվյալ պատճառներով՝

1. Ամբողջ շենքի կամ նրա մի մասում առաջացող անխուսափելի պրաստոյի դեպքում:

2. Արտադրության անհրաժեշտ պահանջների դեպքում:

3. Պրաստոյները կանխելու նպատակով:

Աշխատավորներին փոխադրելու դեպքում ադմինիստրացիան պարտավոր է նրանց օգտագործել իրենց վորակի կամ իրենց վորակին մոտիկ (համապատասխանող) աշխատանքներում: Ըստ բանվորների վորակի ժամանակավոր աշխատանքը բացակայելու դեպքում, աշխատավորը կարող է փոխադրվել իրեն վորակին համապատասխանող (մոտիկ) աշխատանքի, վարձատրվելով տվյալ աշխատանքի համար սահմանված գներով, սակայն վոչ պակաս նրա նախկին միջին աշխատավարձից:

Այն դեպքում, յերբ աշխատավորը փոխադրվում է իրեն վորակին բոլորովին չհամապատասխանող այլ աշխատանքի, նա կարող է աշխատանքից ազատվել, ստանալով արձակման նպաստ:

Վատ յեղանակների (մթնոլորտային տեղումներ, անձրեվ, ձյուն, սառնամանիք և այլն) հետեվանքով առաջացած պրաստոյների ժամանակամիջոցի բոլոր օրերի աշխատավարձը վճարվում է տարիֆային դրույքներով:

Ադմինիստրացիայի մեղքով առաջացած պրաստոյների օրերի աշխատավարձը առաջին 3 օրերի աշխատավարձը վճարվում է միջին աշխատավարձի հաշվով, իսկ յերեքից ավելի օրերը տարիֆային դրույքներով:

Ծանոթություն.—ա) Աշխատանք կատարելու անհնարինությունը (պրաստոյի անխուսափելիությունը) վորոշվում է բանկոմի և վարչության միջոցով, համապատասխան արձանագրությամբ:

բ) Պրաստոյների դեպքում աշխատանքները ներկայացնելու կարգը սահմանվում է ներքին կարգապահության կանոններով:



§ 52

Շինարարության վրա անմիջապես զբաղված աշխատավորներին շինարարական վայրից մի այլ շինարարական վայր փոխադրելու դեպքում նրանց փոխադրման ժամանակամիջոցի համար տրվելու յե աշխատավարձ միջին աշխատավարձի հաշվով և վճարվելու յեն փոխադրման հետ կապված ծախսերը:

## ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍՈՑՄԸՐՑՈՒՄ ՅԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ.

§ 53

Պարգեվատրվում են այն բոլոր բանվորները, վորոնք քանակական և վորակական ցուցանիշներով լրիվ կատարում են իրենց հանձնարարված աշխատանքների նորման:

Պարգեվատրման չափը կախված է կատարված աշխատանքի քանակից, վորակից և տնտեսումից:

Պարգեվատրման ֆակտորներն են հետեվյալ ցուցանիշները՝

ա) Նյութերի խնայողաբար օգտագործումը ըստ առանձին միավորների:

բ) Պրաստոյների տոկոսի իջեցում:

գ) Բրակի իջեցում:

դ) Արտադրանքի վորակի լավացում:

Վարչությունը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում մշակել և բանկոմի հետ համաձայնեցնել պարգեվատրման կանոնները, թված ցուցանիշների համաձայն և կիրառել կյանքում:

§ 54

Վարչությունը պարտավոր է քննության առնել արտադրական խորհրդակցության և անհատ բանվորների առաջարկները 3 օրվա ընթացքում և հայտնել առաջարկի հեղինակներին վորոշման հետեվանքը:

Ռացիոնալիզացման նպատակով վարչության հատկացրած . . . . . ռուբլին պետք է վորոշված լի-

նի, որ գործարանին կամ շենքին, որ մասն է հատկացվելու: Իսկ գործարանների և շենքերի մեջ նույնպես իրենց հատկացվածը բաշխվելու յե ըստ ցեխերի:

§ 55

Վարչությունը պարտավոր է սոցմրցման ֆոնդի հաշվին լայն կերպով ծավալել հարվածայնությունը, պարգևատրելով լավագույն հարվածային և ԾՏ աշխատավորներին, և հարվածային բրիգադներին, լավագույն աշխատանքների արդյունքների (քանակական և որակական ցուցանիշների կատարման), սոցմրցման ծավալման, աշխատանքների նոր մեթոդների կազմակերպման գործում առանձին ձեռներեցություն հայտաբերելու համար, որոնք կնպաստեն արդֆինպլանների կատարման և գերակատարման:

Խմբակային պարգևատրումներ կատարել ոչ ուշ, քան մեկ անգամ յուրաքանչյուր կվարտալում:

§ 56

Վարչությունը պարտավոր է յուր ժամանակին ապահովել համապատասխան եքսպերտիզայի միջոցով լրիվ կերպով ապահովելու բանվորների առաջարկների հաշվառումը, քննումը և իրագործումը, և միաժամանակ կատարելագործել գյուտարարությունը համապատասխան արտադրական բազա կազմակերպելու միջոցով:

§ 57

Բանկոմը պարտավորվում է պարբերական կերպով ղեկավարել և ցուցմունքներ տալ հարվածային բրիգադների կազմակերպիչներին, ԾՏ աշխատավորների միջոցով կազմակերպել տեխնիկական օգնություն, սոցմրցման մեջ գտնվող բանվորներին, կազմակերպել խմբակային արտադրական խորհրդակցություններ, լայն չափով ապահովելու ԾՏ աշխատավորների և ադմինիստրացիայի մասնակցությունը խորհրդակցություններում:



Բանվորները և ԾՏ աշխատավորներն իրենց հերթին պարտավորվում են ակտիվ մասնակցություն ունենալ իրենց խմբակային և ցեխային արտադրական խորհրդակցությունների աշխատանքներում և ծավալել ինչպես անհատական, նույնպես և խմբակային սոցմրցում և հարվածայնություն, արտադրական և սոցֆինպլանային խնդիրները լավագույն կերպով կատարելու համար:

§ 58

Վարչությունը պարտավոր է ոչ ուշ 1/IV 31 թվի մշակել և ներկայացնել բանկոմին համաձայնեցման համար սոցմրցման մեջ գտնվողների և բրիգադաների աշխատանքների հաշվառման ձևը, այն հաշվով, որպեսզի այդպիսին կյանքում կիրառվի ոչ ուշ 1931 թ. ապրիլ ամսի 15-ից:

§ 59

Վարչությունը պարտավորվում է մինչև ապրիլի 1-ը 1931 թ. մշակել և համաձայնեցնել միության հետ պարգևատրումների բաշխման կարգը, ինչպես գործարքային, նույնպես և այն աշխատանքներում, որոնք չեն յենթարկվում նորմիրովկայի: Պարգևատրումները կատարվելու յեն արտադրանքի որակի լավացման, բրակների իջեցման, նյութերի տնտեսման, պրոստոյների վերացման, ցուցանիշների լավագույն կատարման համար և այլն:

§ 60

Գյուտարարներին խրախուսելու համար (որոնք իրենց գյուտարարություններով շինարարության մեջ մտցնում են տնտեսական օգուտներ) վարչությունը պարտավորվում է առանձնացնել 1000 ռուբլի մեկ տարում ՀՍԽՀ սահմանների շինարարության մեջ աշխատող գյուտարարներին պարգևատրելու:

Սոցմրցման և հարվածայնության մեջ գտնվող աշխատավորներին պարգևատրելու համար վարչությունը պարտավորվում է առանձնացնել 2,500 ռուբլի սոցմրցման ֆոնդին, հետագայում այդ գումարը համապատասխան ֆոնդից ծածկելու պայմանով:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԵՐԸ ՅԵՎ ՀԱՆԳԻՍՏԸ

### § 61

Արտաժամյա աշխատանքները և հանգստի օրերին աշխատելը չի թույլատրվում:

Արտադրության անհրաժեշտ դեպքում թույլ է տրվում արտաժամյա աշխատանք, սակայն նախորոք համաձայնություն կայացնելով վարչության և միության միջև:

Արտաժամյա աշխատանքը վարձատրվում է հետևյալ ձևով.

ա) Աշխատավորը ստանալու յե արտաժամյա առաջին յերկու ժամերի համար ամեն մի ժամին՝ իրեն տարիֆային դրույքի մեկ և մեկ քառորդի չափով:

բ) Գործարքով աշխատողները արտաժամյա աշխատելու դեպքում ստանալու յեն առաջին յերկու ժամերի համար ամեն մի ժամի համար 1 և 1/4 ժամվա իր տարիֆային դրույքը, իսկ հետևյալ ժամերի համար՝ ամեն մի ժամին մեկ և կես ժամվա իր տարիֆային դրույքի աշխատավարձի չափով:

Ծանոթություն.— Աշխատավորները իրավունք չունեն արտաժամյա աշխատանք կատարելուց հրաժարվելու:

### § 62

Շինարարության մեջ սահմանված հանգստի օրերին աշխատանք կատարելը կարող է թույլատրվել միայն բացառիկ դեպքերում և մինչև ադմինիստրացիայի գրավոր թույլտվությամբ և աշխատավորի համաձայնությամբ: Թույլտվությունը կարող է տալ այն



անձնավորությունը, վորը տվյալ աշխատանքի համար հատկապես լիազորված է, վորի ազգանունը մտցված է ներքին կարգապահության կանոնադրության մեջ:

Չոգտագործված հանգստյան որը միայն փոխհատուցվում է հանգստյան որով 10 որվա ընթացքում՝ հաշված չոգտագործված հանգստյան որից:

Ծանոթություն.— Անչափահասներին արտաժամյա աշխատանք կատարել և հանգստյան օրերին աշխատելը չի թույլատրվում:

### § 63

Չչափավորված բանվորական որ սահմանվում է բացառապես նույն հավաքական պայմանագրին կցված պաշտոններում գրավված անձնավորությունների համար:

### § 64

Յերկու շաբաթվա արձակուրդի 12 բանվորական որվա հարցը նոր ընդունված բանվորի և ԾՏ աշխատավորի կողմից կարող է հարուցվել վարչության առաջ միայն 11 ամիս անընդհատ աշխատելուց հետո:

Բանվորական տարին հաշվվելու յե տվյալ վարչության մոտ 12 ամիս, ընդունված որից աշխատելով:

Յերկրորդ անգամ արձակուրդ ստանալու հարց կարելի յե հարուցել նախկին բանվորական տարում աշխատելուց հետո և 5 և կես ամիս տվյալ վարչության մոտ աշխատանքը շարունակելուց հետո:

Արձակուրդը վորպես որենք տրվում է որացուցային տարվա սկզբին, կամ վերջին, իսկ անչափահասներին տրվում է անպայման ամառվա ամիսներում:

### § 65

Վարչության կողմից աշխատանքից արձակված բանվոր-ծառայողները կամ իրենց կամքով հեռացողները 11 ամսից պակաս աշխատած լինելու դեպքում

ստանալու յեն արձակուրդի փոխհատուցում իրենց ստացված աշխատավարձի 4․ տոկոսի չափով տվյալ վարչության մոտ իրենց աշխատած ամբողջ ժամանակի համար, սակայն, այն հաշվով, վոր տրված գումարը չգերազանցի նրանց միջին աշխատավարձի 12 որվա վարձից:

Այն աշխատավորները, վորոնք յերկրորդ աշխատանքի տարում նույն վարչության մոտ 5 ամիս աշխատել և հեռացվում են («ա», «բ», «գ» կետերի 47 հոդվ․ Աշխորենսգրքի) ինչպես և նրանք, վորոնք կկանչվեն զինվորական ծառայության, կամ կգործուղվեն սովորելու, ստանալու յեն արձակուրդի փոխարեն դրամական փոխհատուցում 12 որվա միջին աշխատավարձի չափով:

§ 66

Անչափահասները նույն վարչության մոտ 5 և կես ամիս աշխատելուց հետո ձեռք են բերում մեկ ամսվա արձակուրդի իրավունք՝ ամբողջ տարվա համար․ չոգտագործված արձակուրդի դիմաց անչափահասներին դրամական փոխհատուցում է տրվում նրանց վճարած ամբողջ աշխատավարձի 8 տոկոսի չափով:

Չափահաս դառնալու մոմենտին, յեթե նրանք հերթական արձակուրդ չեն ստացել, այդ դեպքում արձակուրդ տրվելու յե բացի սահմանված յերկու շաբաթվանը նաև լրացուցիչ ամեն մի ծառայած ամսի համար ևս մեկական որ, հաշվելով այն մինչև չափահաս դառնալու որը:

§ 67

Այն աշխատավորները, վորոնք 1930 թ․ նոյեմբեր ամսի 1-ից անընդհատ աշխատել են վարչության գործերում «ՈԻՆ» անընդհատ յերկու տարի, տարվա վերջին ձեռք են բերում 3 որվա լրացուցիչ արձակուրդի իրավունք:



§ 68

Այն բանվորները և տեխնիկական պերսոնալը, վորոնք լավագույն աշխատողներ են արտադրության մեջ (հարվածայիններ և սոցմրցման մասնակցողներ), վորոնք յերկար ժամանակ աշխատել են տվյալ վարչությունում և լավ վորակի աշխատանք են կատարել, արտադրական խորհրդակցություններում արժեքավոր առաջարկներ են մտցրել, գյուղատնտեսության մեջ աչքի յեն ընկել, խրախուսվելու յեն վարչության կողմից, առաջին հերթին ուղարկվելու յեն տեխնիկ․ ԲՈԻՀ-երը սովորելու, հանգստյան տներ, կուրորտներ, գործուղվելու յեն արտասահման վորակավորվելու, առաջին հերթին նրանք պետք է ոգտվեն դեֆիցիտային ապրանքներից և այլն:

§ 69

Չափավորված բանվորական որ ունեցող աշխատավորներին տրվելու յե լրացուցիչ արձակուրդ, համաձայն սույն պայմանագրին կցված ցուցակի:

Անչափահասներին, վորոնք աշխատում են վնասակար և ծանր գործերում (վորոնք նախատեսված են որենքով), տրվելու յե լրացուցիչ արձակուրդ յերկու շաբաթ ևս:

§ 70

Վարչությունը («ՈԻՆ») ճաշ ընդունելու համար տրամադրել է շենք, ամառվա ընթացքում շենքերի վրա պատրաստել դուշեր, պատրաստել ջուր յեռացնելու համար կուբեր, լվացարաններ, լվացարանների մոտ քաշ անել յերեսսրբիչներ, մատակարարել սապոն 400 գրամ յուրաքանչյուր ամսում, մեկ մարդի հաշվով:

§ 71

Վարչությունը («ՈԻՆ») պարտավորվում է՝

1) Տեղերում ունենալ (անկախ գտնվող վայրից)

դեղատուփեր, անհրաժեշտ դեղորայքով, առաջին բուժ. օգնություն հասցնելու համար:

2) Համաձայնություն գալ առողջապահական մարմինների հետ, այն վայրերում, ուր աշխատում են վոչ պակաս 100 բանվորներից, ուր աշխատանքների տևողությունը 6 ամսից պակաս չէ, հիմնելու բժշկական կետեր, տրամադրելով վերահիշյալ ձեռնարկների համար շենք:

3 Իր հաշվին փոխադրել բուժ. ձեռնարկներ ծանր և վարակիչ հիվանդներին, ինչպես աշխատանքի վայրերից, նույնպես և հանրակացարաններից:

§ 72

Վարչությունը պարտավոր է տրամադրելու կոոպերատիվ ձեռնարկներին շենք, ճաշարանի, խոհանոցի և կրպակների համար:

§ 73

Մասնագիտական հագուստ շենքերի վրայի աշխատավորներին տրվում է ըստ սույն պայմանագրին կցված ցուցակի (կցում № 3):

Արտահագուստը հանդիսանում է ձեռնարկության սեփականությունը. արտահագուստ կրելու ժամանակամիջոցը լրանալու կամ աշխատողի հեռանալու դեպքում արտահագուստը վերադարձվում է ձեռնարկության. առանց հին արտահագուստը վերադարձնելու նորը չի կարող տրվել: Հանցավորները, վորոնք արտահագուստը կհափշտակեն կամ կկորցնեն, կկանչվեն պատասխանատվության, իսկ արժեքը կգանձվի 5 անգամ ավելի ինքնարժեքից. վեճերը լուծվելու են ԳԿՀ-ում:

Վարչությունը պարտավոր է իրեն հաշվին վերանորոգել և լվանալ արտահագուստը:

Ծանոթություն.— Անչափահասները մասնագիտական հագուստ ստանում են չափահասների հետ հավասար նորմաներով, այն արհեստների բանվորների, վորում նրանք աշխատում են:



§ 74

Վարչությունը («ՈՒՆ») պարտավորվում է յեկվոր աշխատավորներին տրամադրել ապրելու համար բնակարան, համապատասխան կահավորությամբ, ըստ ԽՍՀՄ-ի Աշխժողկոմատի պարտադիր վորոշման (կոյկաներ, նստարաններ, սեղաններ և այլն):

Ծանոթություն.— 1. Բանվորներին մինչև հանրակացարանում տեղավորվելը պետք է յենթարկվեն բժշկական քննության:

Ծանոթություն.— 2. Բանվոր- ծառայողների ընտանիքները կարող են ոգտվել բնակարանից, յեթե այդ մասին պայմանավորված է յեղել վարձման ժամանակ:

Ծանոթություն.—3. Բանվորները պարտավոր են վոչ ուշ, մինչև մեկ ամսից, հաշված վարձման որից, տեղյակ պահել վարչությանը իրենց համար պահանջ զգացվող բնակարանի մասին:

Ծանոթություն. 4. Աշխատավորներ, վորոնք աշխատել են 6 ամսից վոչ պակաս և իրենցից անկախ պատճառներով աշխատանքից հեռանալու դեպքում, գործազրկության ընթացքում չեն կարող նրանց տրամադրած բնակարանից հեռացվել, սակայն, նրանց իրավունք է պահպանվում զբաղեցնել վոչ ավել 2 շաբաթից: Մահացածների ընտանիքները ոգտվում են նույն իրավունքներից մինչև մեկ ամիս:

Ծանոթություն.—5. Այն դեպքերում, յերբ վարչությունը բնակարան չի հատկացնում, աշխատավորի կողմից բնակարան վարձելու դեպքում, վարչությունը պարտավոր է ամսական 6

ռուբլի վճարել աշխատավորին: Վարչությունը պարտավոր է աշխատանքի բոլոր վայրերում պատրաստել լվացարաններ, ըստ հնարավորության և բնակարաններում, մատակարարել անհրաժեշտ քանակությամբ ջուր, օճառ. բացի դրանից, վարչությունը պարտավոր է յուրաքանչյուր աշխատավորին տալ մեկական հատ յերեսսրբիչ մեկ տարի ժամանակով:

§ 75

Աշխատանքների այն վայրերում, ուր պահանջվում է բոլոր տեսակի աշխատանքների ճարտարապետ, տեխնիկ և վարչատնտեսական կազմի աշխատավորների մասնակցությունը, վարչությունը պարտավոր է տրամադրել նրանց բնակարան, ջեռուցումով, լուսավորությամբ և ուրիշ կոմունալ սպասարկումներով, սակայն վարձատրությամբ ըստ տեղական գործկոմների կողմից վորոշված նորմաների:

Ծանոթություն — Սույնը տարածվում է միայն չչափավորված բանվորական ու ունեցող աշխատավորների վրա:

§ 76

Այն դեպքում, յերբ վարչությունը աշխատանքների ռաժոնում աշխատավորներին բնակարան չի հատկացնում, պարտավոր է աշխատավորների վայրից 3 կիլոմետր և ավելի հեռավորության վրա գնալ և վերադառնալու համար տրամադրել փոխադրական միջոցներ (մինչև աշխատավայրը և հետ բնակավայրը):

§ 77

Սոցկենցաղային խմբակի ներկայացուցիչը ըստ բանկոմի պահանջման մեկ մարդ ամսական վոչ ավել 8 ժամից ազատվում է աշխատանքից, աշխատանքի անվտանգության պայմանները ստուգելու համար, և վարչությունը պարտավոր է նրա միջին աշխատավարձը ազատված ժամանակամիջոցի պահպանել:



## ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

§ 78

Տվյալ ձեռնարկության մեջ միութենական աշխատանքներ տանելու և միութենական մարմնի պահպանելու համար վարչությունը պարտավոր է հատկացնել բանվոր-ծառայողներին վճարած աշխատավարձի 0,75 տոկոսի չափով և բանվորների մեջ կուլտուր-կրթական աշխատանքներ տանելու համար հատկացնել 0,75 տոկոսի չափով, ընդամենը 1,5 չափով ռոճիկները վճարելուց հետո, վոչ ուշ 5 որից:

Ծանոթություն — Սույն պարագրաֆում թվված բոլոր մուծումները վարչությունը պարտավոր է վճարել, մուծելով այն տեղկոմի ընթացիկ հաշվին, կամ կանխիկ վճարելով իրեն: Այդպիսիները տեղկոմի ներկայացուցչին վճարելուց, ամեն անգամ պետք է պահանջել նրանից լիազորագիր՝ ստորագրված տեղկոմի միյուս յերկու անդամների կողմից և ստացողի անունն ազգանունը, ստորագրության ձևը, տեղկոմը, կամ խմբկոմը ուղարկելու յեն վարչության:

§ 79

Բացի թված ծախսերից վարչությունը տրամադրելու յե նաև առանց վարձի տեղկոմին մի սենյակ լրիվ կահավորված (գրասեղան, աթոռներ և այլն) վառելիք, լուսավորություն և հեռախոս: Բացի այդ և սրահ տանվացն ամիսը մեկ անգամ ընդհանուր ժողովներ հրավիրելու համար:

Այն դեպքում, յերբ կառուցումների վրա բանկոմ չի կազմակերպված, վարչությունը պարտավոր է մասնակցելու շենքի պահպանման ծախսերին: Ցել միաժամանակ շենքի վարձելու համար վճարելու բանվոր-ծառայողներին վճարած ամբողջ աշխատավարձի 0,5 տոկոսի չափով:

## § 80

Խորհրդային, կուսակցական, կոոպերատիվ և այլ հասարակական մարմինների կողմից հրավիրված համագումարների, կոնֆերանսների, պլենումների և լիազորական ժողովներին մասնակցելու համար ընտրված բոլոր պատգամավորների աշխատավարձը նրանց անվողության ամբողջ ժամանակամիջոցում վճարվելու յե վարչության, ընտրված պատգամավորների միջին աշխատավարձի հաշվով:

Բրիգադայի մեջ ընտրված բանվորներին (վարչության և միության համաձայնությամբ) նույնպես վճարվելու յե միջին աշխատավարձի հաշվով, բրիգադայի մեջ աշխատելու ժամանակամիջոցի համար:

Բացի կուլտաշխատանքների համար կատարվող տեղական հատկացումներից, վարչությունը պարտավոր է տրամադրել և իրեն հաշվին պահպանել բնակարան կուլտ-կրթական աշխատանքներ կատարելու համար (ակումբ, կարմիր անկյուն, գրադարան, անգրագիտության դպրոցներ և շենք ընդհանուր կրթության տալու համար, կուրսեր), կատարել անհրաժեշտ միջին և մանր վերանորոգումներ. տալ վառելիք, լուսավորություն և ջուր ըստ բանկոմի համաձայնության:

## ՃԱՐՏ.—ՏԵԽՆԻԿ. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## § 81

Հավաքական պայմանագրի սույն մասը տարածվում է ճարտ.—տեխնիկների բոլոր տեսակի պաշտոնյաների վրա, ՃՏ աշխատավորների տարիֆային տեղեկատուով նախատեսված պաշտոնների աշխատակիցների վրա (Տարիֆ Տեղեկատու Համամիութ. Կառ. Բանվ. Արհմիության 1930 թ. կցում № 4):

Նաև սույն պայմանագրին կցված ցուցակում նախատեսված պաշտոնների վրա:



Վարչատեխնիկական ղեկավարող պաշտոնների համար (աշխղեկ և բարձր պաշտոններ) թեկնածուներ է առաջարկում միությունը, բայց վորում նրանց ընդունելու վերջնական վորոշումը թողնվում է վարչությանը:

## § 82

Ճարտ. և տեխնիկ. աշխատավորներին աշխատանքներից հեռացնելու դեպքում վարչությունը պարտավոր է նախազգուշացնել գրավոր ձևով մի ամիս առաջ, իրեն ցանկությամբ հեռանալու դեպքում ճարտ.—տեխնիկ. աշխատավորը պարտավոր է մի ամիս առաջ հայտնել վարչությանը:

## § 83

Ճարտ.—տեխնիկական աշխատանքների վարձատրության չափը սահմանվում է Կառուցողների կենտկոմի 1930 թ. հրատարակված տարիֆային տեղեկատուով. համաձայն նրանց տարիֆային ցանցի, հարաբերականով 1:4 հետևյալ համեմատական կարգերով, ըստ վորում վարչատեխնիկական կազմի առաջին կարգի ամսական տարիֆ դրույքը սահմանվում է 125 ռ.:

| Կարգ. | Կոեֆ. | Ամսական դրույք. | Կարգ. | Կոեֆ. | Ամսական դրույք. |
|---|---|---|---|---|---|
| 1 | 1,0 | 125 | 9 | 9,00 | 250 |
| 2 | 1,10 | 137—50 | 10 | 2,20 | 275 |
| 3 | 1,20 | 150 | 11 | 2,40 | 300 |
| 4 | 1,30 | 162—50 | 12 | 2,60 | 325 |
| 5 | 1,40 | 175 | 13 | 2,85 | 355—25 |
| 6 | 1,55 | 195—75 | 14 | 3,15 | 293—75 |
| 7 | 1,70 | 212—50 | 15 | 2,30 | 437—50 |
| 8 | 1,85 | 231—25 | 16 | 4,00 | 500 |

## § 84

Տեխնիկական, արտադրական և տնտեսական նախաձեռնումների համար ճարտարագետ—տեխնիկական աշխա—

տավորներին տրվում են անհատական կամ խմբակային պարգևատրումներ համաձայն Աշխ. Պաշտպանության Խորհրդի 1929 թ. հունվ. 15-ի կանոնադրության (շինարարության վերաբերյալ)։

§ 85

Ճարտարապետ-տեխնիկական աշխատավորներին, աշխատանքներից հեռացնելու կամ նրանց դատական պատասխանատվության կանչելու դեպքում անտեսավարության, կամ դեպի արտադրությունը ունեցած թերությունների համար, վարչությունը պարտավոր է մինչև նրանց պատասխանատվության կանչելը նշանակել էքսպերտիզա միության ներկայացուցչի ՃՏՍ մասնակցությամբ։

§ 86

Ճարտարապետ-տեխնիկ աշխատավորների վորակը բարձրացնելու համար վարչությունը (ՌԻՆ-ը) պարտավոր է՝

ա) Իր հաշվին ՃՏ աշխատավորներին գործուղել գիտական-տեխնիկական համագումարներ, խորհրդակցություններ, ըստ վորում պահպանել գործուղման ամբողջ ժամանակամիջոցում գործուղվածների աշխատավարձը։

բ) Կազմակերպել տեխնիկական գրադարան ՃՏ աշխատավորների համար, իսկ յեղած գրադարանները լրացնել համապատասխան գրականությամբ։

§ 87

ՃՏՍ-ների աշխատանքների կազմակերպման և պրակտիկ աշխատանքների համար վարչությունը պարտավոր է միանվագ հատկացնել 150 ռուբլի։

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԵՏԵՐ

§ 88

Վարչությունը պարտավոր է կիրարկել ներքին կարգապահության կանոնադրությունը հաստատված



Աշխժողկոմատի կողմից։ Բոլոր լրացումները և փոփոխությունները, վորոնք մտցրված կլինեն յելնելով տեղական պայմաններից, նախորոք պետք է համաձայնեցվեն բանկոմի հետ։

§ 89

Վարչությունը պարտավոր է՝

1) Իր հաշվին սույն հավաքական պայմանագիրը բոլոր լրացուցիչ կցումներով տպագրել տալ հայերեն լեզվով 300 օրինակ և ռուսերեն լեզվով 300 օրինակ վոչ ուշ մինչև 1 ապրիլի 1931 թ.։

2) Սույն պայմանագիրը փակցնել աչքի ընկնող շինարարական վայրերում։

3 Վճարել սույն հավաքական պայմանագրի տպագրման հետ կապված բոլոր ծախսերը։

Կառուցողների Արհմիության Կենտվարչության
Նախագահ՝ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Ռազմշինարարական Վարչության պետի
Տեղակալ՝ Ա. ՈՍԻՊՈՎ

Ի փոփոխումն § 73-ի բանկոմի պահպանման համար 0,75 տոկոսի փոխարեն վճարվում է 0,50 տոկոս և բանվոր-ծառայողների մեջ կուլտ-կրթական աշխատանքներ կատարելու համար 0,75 տոկոսի փոխարեն 0,50 տոկոս, բանվոր-ծառայողներին վճարված ամբողջ աշխատավարձից և վոչ ուշ 5 օրվա ընթացքում մուծում է բանկոմին։

Կառուցողների Արհմիության Կենտվարչության
Նախագահ՝ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Ռազմշինարարական Վարչության պետի
Տեղակալ՝ ՈՍԻՊՈՎ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

311

ՀՀ Ազգային գրադարան
NL0196650